

# ՎԵՐՁԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՍ

Թէեւ արեւելահայ մեր եղբայրները կրթական ցանցի համեատ պաշտօնեան կը նախընտրեն կոչել դասատու, իսկ՝ սփիւռքահայերս ուսուցիչ, դժուար չէ կռահել երկու համանման բառերուն խոր տարբերութիւնը: Դասատուն դասարանի մէջ գիտելիք եւ տեղեկութիւններ փոխանցողն է, իսկ ուսուցիչը՝ կեանքի պատրաստող, ուղղութիւն տուող, կեանքի համար պիտոյ առաքելատիպ անձնաւորութիւնն է, որ իր յանձնարարութեամբ շատ աւելի ծանրակշիռ է, քան տարրական գիտելիքներու հաղորդումը:

Մեզմէ ոչ ոք տեսած է Մեսրոպ Մաշտոցը, սակայն վիճակը ընդունած ենք որպէս մեր ժողովորդին առաջին ուսուցիչը, բոլորիս ուսուցիչը, որ դարերու ընթացքին մեզ պիտոյ է սեփական գիրով, հետեւաբար՝ դպրութեամբ եւ գրականութեամբ, մշակոյթով եւ ինքնութեամբ: Ուրեմն՝ ուսուցիչը չի սահմանափակուիր դասարանով եւ ժամանակաշրջանով, այլ՝ ան ոգի է, ուղղութիւն, դաւանանք եւ մշտնջենական փարոս: Գաղափարի ուսուցիչներ կան, որոնք տասնամեակներ առաջ նահատակուած են այս կամ այն պատճառով, սակայն՝ անոնք առ այսօր սերունդներուն կու տան աւիշ ու աւին, կը թելադրեն զոհողութիւն եւ նուիրում, ճամբայ կը հարթեն պայքարի եւ նորանոր գօտեմարտի. անոնց մահարձանները աւելի՛ խօսուն են ու թելադրող, քան՝ շնչող եւ ապրող ուսուցիչներ: Ուրեմն, ուսուցիչը իր վարքով ու փառքով, նոյնիքն կենցաղով ու կեանքի հանդէպ ըմբռնումով դաստիարակութիւն է, օրինակելիութիւն է, տիպար է:

Գալով դասատուի եւ ուսուցիչի տարբերութեան, արդեօ՞ք պատահականութիւն է, որ հողին վրայ բնակող եւ ազգային ուժացման վտանգէ վերժ արեւելահայ մեր եղբայրները որդեգրած են առաջին տարբերակը, իսկ աշխարհով մէկ սփռուած եւ ամէն օր ու ժամ ձուլման սպառնալիքը դիմակալող սփիւռքահայերս իւրացուցած ենք երկրորդ տարբերակը:

Հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան արեւելահայ դասատուն պարտաւոր է աշակերտին փոխանցել հայերէն լեզուի գաղտնիքներն ու նրբութիւնները, առանց դժուարութեան ցոյց տալով Սարգսրապատի վայրն ու Էջմիածինի դիրքը, Արարատի շքեղութիւնն ու Ջանգելուրի տեղը. որովհետեւ հողին ուժով մնուցուող եւ ուռճացող հայրդին, ինքնաբերաբար ներշնչուած է հողին ու հայրենիքին ոգիով, կոփուած է հայրենի երկրին պարգեւած հոգեկան ու բարոյական պէնքով, չունի ապազգայնացման վտանգը: Դասատուին առաքելութիւնը միայն գիտելիքն է՝ հեռու պագական ներշնչումէ ու փոթորկումէ:

Հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան սփիւռքահայ ուսուցիչին պարագան բոլորովին տարբեր է: Այս «խենթ»-ը նախ պիտի փոխանցէ գիտելիք (եթէ լսող ըլլայ). գիտելիքը պիտի սիրցնէ՝ վայն համեմելով եւ ճոխացնելով հայրենասիրական ոգիով եւ ներշնչումով (եթէ ընկալող ըլլայ). դասապահերու կողքին պիտի կլանուի արտադասարանային պարտականութիւններով՝ աշակերտները գօտեպնդելով հեռաւոր հայրենիքի մշտահուր կրակով (եթէ գնահատող ըլլայ): Այս թշուառականը պիտի «մարսէ» ամէն արհամարհանք եւ անարգանք (աշակերտներէ, ծնողներէ, հոգաբարձուներէ), քանի ո՛չ հայերէն լեզուն եւ ոչ ալ հայոց պատմութիւնը պետական քննութեան առարկաներ են եւ ուրեմն՝ շուկայ չունին. այս նիւթերը ո՛չ ապագայ կ'ապահովեն եւ ոչ անսակմանի յաւելում կ'երաշխաւորեն: Այս երիցս թշուառականը նիւթապէս պիտի վարձատրուի (եթէ վարձատրուի) իր պաշտօնակիցներէն աւելի համեատ գումարով. աւելին՝ այս արարածը առաջին թեկնածուն պիտի ըլլայ գործապուրկ ըլլալու եւ փողոց շարտուելու: Տակաւին, անցեալին պիտակներ ունէր նաեւ (մեծափոր հոգաբարձուներու կողմէ), որպէս վարժապետ, մանկավարժ (ականջը խօսի Յակոբ Պարոնեանին):

Հակառակ հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան սփիւռքահայ ուսուցիչներու ապրած մոռալ եւ անիրապոյր պայմաններուն, դառնալեղի կեանքին, խոր յարգանք պարտինք տածել անոնց նկատմամբ (գէթ խօսքերով կամ սրբատառ կոնդակներով), քանզի անոնք կը նմանին օրէցօրէ հալող մոմերու, որոնք պիտի սպառին առյաւէտ: Այդ ժամանակ (կամ շուտով) Հայոց Գիրերու Գիւտին 1600-ամեակի սրբատառ կոնդակները պիտի նմանին խոպոտ ու ոչինչ ըսող ձախերու: Որո՞ւ համար են նման կոնդակները, երբ անոնց հեղինակները ծպտուն իսկ չեն հաներ պատմական կրթօճախի մը անփառունակ անկման ի տես:

Այսօր կը դժուարանամ յիշել հայերէն լեզուի առաջին ուսուցիչիս անունը, թէեւ մեր տունները եղած են հայախօսութեան առաջին վայրերը: Այսօր, ակամայ, յիշողութեանս պաստառին վրայ կը տողանցեն նախակրթարանի եւ երկրորդականի հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցիչներուս, որոնք գիտելիքներէ անդին՝ մեպի, մատղաշ սերունդին սիրել տուին մայրենին եւ ազգին պատմութիւնը: Մինչ օրիորդ Մաքրուհի Երկանեան կը պատմէր Երեւանի փողոցներուն եւ իր հայրենական ուսումնասիրութեան անմոռանալի օրերուն մասին, մեր մէջ կը ստեղծէր նո՛յն փափաքն ու երապը՝ օր մը վայելելու հայոց մայրաքաղաքին գեղածիծաղ փողոցները: Մինչ տիկին Մաքրուհի Խաչատուրեան կը սորվեցնէր հայերէն բառերու հոմանիշները, կը վարմանայինք թէ ինչպէ՛ս ան կը յիշէր այդքան բառեր. օր մըն ալ աշակերտներ պիտի ապշէին, թէ ինչպէս գաւապան բառը իր տարբերակներով ունի բազմաթիւ հոմանիշներ՝ գան, գանակ, բիր, ցուպ, թոպ, լախտ, մական, ասա: Պարոն Հրանդ Գանգրունի գրատախտակին վրայ պիտի գրէր Միխիթար Գոշ,

մենք սխալմամբ արտագրէինք Միխիթար Գոշ, օր մը հիանալու համար «Դատաստանագիրք»-ի հեղինակին միտքի պայծառութեան վրայ: Պարոն Մանուէլ Ադամեանի շեշտած Մանակերտի ճակատամարտին կարեւորութեան պիտի անդրադառնայինք աւելի ուշ՝ խորանայէ ետք պատմութեան որոշակի ծալքերուն: Մինչ պարոն Պէպօ Սիմոնեան մատենագրութեան պահուն պիտի յիշէր Սարգիս Պիծակի անունը, կողքիս նստած դասընկերս սրամտութիւն պիտի հիւսէր «պիծակ» բառին շուրջ: Հայր Նարեկ վարդապետ Ալեքսեպեան անդրադառնալով հայ գաղթօճախներու պատմութեան, պիտի ընդգծէր, թէ ինչպէս լեհահայ հպօր գաղութը, Նիկոլ Թորոսովիչ կոչուած ազգադաւ եւ արկածախնդիր գործակալի մը պատճառով պիտի ձուլուէր եւ անհետանար, չէինք գիտեր, թէ 2005-ին նոր Նիկոլ Թորոսովիչ մը 79-ամեայ դպրոց մը փակելով կիպրահայ գաղութը պիտի առաջնորդէր ձուլման խորխորատը: Անունները կը փոխուին, բայց պատմութիւնը կը կրկնուի:

Այսպէս, կոչումի տէր, առաքելութեան հաւատացող դասատուէ աւելի ուսուցիչներ սեր ու յարգանք փոխանցեցին հանդէպ մայրենի լեզուին ու պատմութեան: Օր մըն ալ, կեանքի պայմանները նոյն առաքելութիւնը փոխանցեցին ինծի: Սերունդները փոխուեցան, երթն ու ոգին մնաց:

Սակայն, այս մօտիկ անցեալի պատմութիւնը, Յունիս 2005-ին դարձաւ խոր անցեալին պատկանող էջ, քանզի «բախտաւորութիւնը» ունեցայ ունենալու նոր ուսուցիչ մը: Այս ուսուցիչը ո՛չ դասարան մտաւ դասասանդելու եւ ոչ լսարան՝ դասախօսելու: Վերջին ուսուցիչս չեմ տեսած բարեբախտաբար, չեմ լսած վիճք բարեբախտաբար, բայց ա՛ն եղաւ որ աւելի վիս մօտեցուց վիս կեանքին, աշխարհին եւ շուկային: Ան իր որոշումով՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակելու եկաւ սեւ մուրով գիծ քաշելու իմ նախակրթարանի եւ երկրորդականի ուսուցիչներուս դաստիարակութեան վրայ: Ան եկաւ համոզելու եւ փաստելու, որ հայերէնն ու հայոց պատմութիւնը անցեալին կը պատկանին, ժամանակավրէյա են, անօթի կը մնան սորվողները, պիտի տանջուին մայրենին ու իրենց հայրենիքը սիրողները: Այս ազգային մշակոյթի եւ պատմութեան անողորք դահիճ-ուսուցիչս ի՛նչ ինկարկուններ ունեցաւ աստ եւ անդ: Անցեալին, դպրոց հիմնադրողը կը հպարտանար, այսօր՝ դպրոց փակող ուսուցիչս կը հպարտանայ իր դպրոցաքանդ արարքով եւ կը փառաբանուի շռայլ տիտղոսներով, «ձեռներէց նախագահ»-էն սկսեալ: Այս ուսուցիչիս փոխանցած կեանքի՛ դասէն ետք սկսայ հեռանալ մայրենիէն, իրտչեցայ հայերէն գիրքերէս, հայ գիրքերու ցուցահանդէսի սեմին չմօտեցայ, սկսայ օտարանալ իմ արմատներէս, նախկին ուսուցիչներէս, տանս գրադարաններէն եւ Մեսրոպ Մաշտոցէն: Այս ուսուցիչս սորվեցուց որ «ազգապահպանման» ջահակիրի պատմութեան կրող կազմակերպութեան ղեկավարութեան հետ յարաբերելու համար պէտք է սորվիլ անգլերէն, քանի միակ հայ կազմակերպութիւնն է, որուն վերին մարմինը անգլիախօս է, ամերիկաշունչ է եւ աւելին... հայ դպրոցը կ'ատէ: Այս ուսուցիչս սորվեցայ, թէ ինչպէս ամերիկացի գործակալի մը ազգին դրամը կու տան շռայլօրէն՝ 75-ամեայ Մելգոնեանը փակելու, 250 հայ աշակերտի ազգային գիտակցութիւնը աղաւաղելու, հայ ուսուցիչն ու տնօրէնը հալածելու եւ հայոց կայուածէն դուրս նետելու համար:

Վերջին ուսուցիչս ա՛յսօր վիս մօտեցուց կեանքին բարեբախտաբար. եթէ աւելի ուշ ըլլար, պղծումս եւ ափսոսանքս պիտի յամենար. ի՛նչ հրճումնք, որ շուտ հասկցայ, թէ Մեսրոպ Մաշտոցն ու իր գիւտը անցեալին կը պատկանին: Վաղուան հորիպոնը կը թելադրէ այլ բան. «ձեռներէց նախագահ» ուսուցիչս կը յանձնարարէ կեանքին դասը, պահանջն ու կարեւորութիւնը, որն է՝ սորվի՛ր ամէն ինչ, բացի հայերէնէն ու հայոց պատմութեանէն. որովհետեւ անոնք կը պատկանին գերեզմաններուն, ինչպէս որ 2005 Յունիսին Մելգոնեանը դարձաւ գերեզմանատուն: Ինչպէս որ ուսուցիչս վարժարանը վերածեց գերեզմանատան:

Վերջին ուսուցիչիս դասով սորվեցայ, թէ ինչպէս հայ գաղութներ կը ջնջուին քարտէսէն, թէ ինչպէս հայրդիք կը հեռանան ազգային հաւաքականութենէն, թէ ինչպէս կը ծախեն հայրենիք, թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս այդքան արագ ու հեշտ կոտորուեցանք Մեծ Եղեռնին. որովհետեւ՝ ուսուցիչիս դասով ու վճիռով վտանգուեցան գոնէ կիպրահայ, յունահայ եւ պուլկարահայ գաղութները. որովհետեւ՝ ուսուցիչիս դասով ու վճիռով գոն՛է 250 աշակերտներ իրտչեցան իրենց ժողովորդէն. որովհետեւ՝ ամերիկացիի ձեռքով եւ հայու դրամով անայացաւ Մելգոնեան-հայրենիքը. որովհետեւ՝ 1974-ի թրքական դիտաւորեալ ոմբակոծումն ու 1980-ականներու թրքական զրպատրութիւնները Մելգոնեանի հասցէին չկրցան փակել տալ «Լուսոյ Տաճար»-ին դռները, իսկ վերջին ուսուցիչս աւերի ու աւարի վերածեց հայոց շէն կրթթօճախը: Իսկական՝ կեանքի ուսուցիչ, որ վիս հեռացուց լսարանի, դասարանի, գրադարանի եւ պատմութեան երապներու աշխարհէն եւ մօտեցուց կեանքի իրականութեան, դաժան ու դառն իրականութեան.- մոռցի՛ր լեզուդ եւ անցեալդ, մօտեցի՛ր ապագային ու կեանքին:

Շնորհակալութիւն վերջին ուսուցիչ, կեանքի՛ ուսուցիչ:

Այս վերջին ուսուցիչս կը կոչուի Հ.Բ.Ա.Մ.-ի «ձեռներէց նախագահ» ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿՕՂ-ԼՈՒ...: